

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՄ  
ՆԵՐԱԿԱՅՄԱՆ ՀԱՐԱՔԵՐԱԿԻՑՆԵՐ

Լ. Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

Ներակայման (իմպլիկացիայի) «եթե-այա» կապը լեզվում արտահայտվում է բազմազան ձևերով: Այդ բազմապիսի լեզվական հարաբերակիցների առավել լրիվ պատկերի բացահայտումը կապված է դրանց ներկայացման մակարդակների խիստ կարևոր հարցի հետ: Այս տեսակետից մենք տարբերակում ենք մակերեսային և խորքային մակարդակները: Մակարդակների այս աստիճանավորմանը համապատասխան տարբերակում ենք ներակայման արտակա (բացահայտ, անմիջական) և ներակա (ոչ բացահայտ, միջնորդավորված) լեզվական հարաբերակիցները: Արտակա հարաբերակիցները լեզվական այն ձևերն են, որոնք անմիջականորեն տրված են նախադասության մեջ և հատկապես կոչված են արտահայտելու պայմանական նշանակությունը: Դրանք պայմանական շաղկապներն են: Ներակա հարաբերակիցները ձևականորեն բոլորովին շարտահայտված, չնյութականացված լեզվական այն միջոցներն են, որոնց իմաստային կառուցվածքն է բովանդակում պայմանական նշանակություն: Դրանք մեկնաբանվում են՝ տարբեր ձևերով՝ փոխակերպվելով մակերեսային ցուցանիշներով պայմանական նախադասությունների: Նշված նախադասությունների շարքն են դասվում, օրինակ, պարզ և բարդ նախադասությունների առանձին տեսակները:

Հոդվածի նպատակն է վերլուծել ներակայում արտահայտող պարզ նախադասությունները: Դրանց շրջանակում տարբերակվում են հետևյալ տարատեսակները. 1) պարզ նախադասություններ, որոնք պայմանական իմաստն արտահայտում են որոշ ներակայիչների (ИМПЛИКАТОР) օգնությամբ, 2) պարզ նախադասություններ, որոնք արտահայտում են քսիոմատիկ փաստեր և համընդհանուր ճշմարտություններ, 3) պարզ նախադասություններ, որոնք արտահայտում են տարանջատական և բացարձակ հանրույթներ:

Պարզ նախադասություններ, որոնք պայմանական իմաստն արտահայտում են որոշ ներակայիչների օգնությամբ: Պայմանական իմաստի ներակայիչներ պարզ նախադասության մեջ կարող են լինել նախադասության տարբեր անդամները: Այդպիսի նախադասություններում բայը դրված է ստորագրասական եղանակով: Դիտարկենք այն պարզ նախադասությունները, ուր ներակայի դերում հանդես են գալիս պարագայական որոշիչները (обстоятельство-дeterminант):

Որպես պարագայական որոշիչ կարող է հանդես գալ տեղի որոշիչը: Այսպես, «Ծն ինձ վատ կզգայի գյուղում» նախադասության մեջ, որը պարունակում է կզգայի բայը ստորագրասական եղանակի ձևով և գյուղում տեղի որոշիչը, կարելի է առկայացնել ոչ իրական պայմանի նշանակությունը. «Եթե ես գյուղում լինեի, ինձ այնտեղ վատ կզգայի»: Նման օրինակ է բե-

րում Ա. Ն. Գորյան. «Ես հանրահայտ կլինեի Հոլիվուդում», նշելով, որ «Ես հանրահայտ կլինեի» բաղադրիչով արտահայտված գործողության ոչ իրական լինելու նշանակությունը առկայացվում է «Հոլիվուդում» որոշի գույն-գորգամամբ<sup>1</sup>:

Պարագայական ներակայի դերում հանդես է գալիս նաև ժամանակային որոշիչը: Օրինակ. «Քսան տառի առաջ կհինը երջանիկ կլինեի» նախադասությունը խորքային մակարդակով նշանակում է. «Եթե դա քսան տարի առաջ տեղի ունենար, կհինը երջանիկ կլինեի»:

Պետք է նշել, որ կառուցվածքային առումով միատեսակ նախադասություններում տարբեր կանխնթաղույթները որոշում են խորքային իմաստի արտահայտման համապատասխան ձևի ընտրությունը: Հմմտ. «Մյուս տարի կլրանար նրա իննսունամյակը» նախադասության մեջ «Եթե նա կենդանի լինեի» մասը լեզվական արտահայտություն չի ստանում: Ըստ որում, հասցեատերը սոսկ կառուցում է ոչ-իրական ենթադրություն՝ «Մյուս տարի կլրանար նրա իննսունամյակը», շրնդարձակելով այն պայմանի բարդ ստորադասական նախադասության: Պարզ նախադասության ներակայիչներից են նաև այսպես կոչված «նախադասության իմաստի անունները» («Имена положительной семантики»), որոնք, որպես կանոն, կատարում են ենթակայի դեր: Բերենք օրինակներ. «Ինչպես կհանձնվի» → «Եթե նա դուստր ունենար, վերջինս կոգներ նրան», «Ճանապարհորդությունը նրան կապաքինեի» → «Եթե նա ճանապարհորդության գնար, դա նրան կապաքինեի»:

Աստիճանական փաստեր և համընդհանուր ճշմարտություններ արտահայտող պարզ նախադասություններ: Խորքային մակարդակում ներակայող հարաբերություն են բովանդակում նաև աքսիոմատիկ փաստեր արտահայտող նախադասությունները: Այսպես, «Եռանկյան անկյունների գումարը հավասար է 180 աստիճանի» նույնական է «Եթե ունենք եռանկյունի, ապա դրա անկյունների գումարը հավասար է 180 աստիճանի»: Կամ «Երկու կետերի միջև ամենակարճ հեռավորությունը ուղիղ գիծն է» մակերեսային մակարդակով ներկայացվում է հետևյալ կերպ. «Եթե ունենք երկու կետ, ապա դրանց միջև ամենակարճ հեռավորությունը ուղիղ գիծն է»: «Երկու ուղիղ անկյուններն իրար հավասար են» նախադասությունը կարող է արտակայվել «Եթե ունենք երկու ուղիղ անկյուն, ապա դրանք իրար հավասար են» նախադասության: Այս առնչությամբ Գ. Լ. Գարեգինյանը<sup>2</sup> պնդում է, որ ցանկացած թեորեմ կարելի է ձևակերպել այնպես, որ այն սկսվի եթե շաղկապով:

Կառուցվածքային և իմաստային առումով նման նախադասություններին հարում են ասացվածքային բնույթ ունեցող և համընդհանուր ճշմարտություններ արտահայտող նախադասությունները, ինչպես օրինակ. «Միայն աշխատասեր մարդիկ կարող են հասնել հաջողության», «Միայն անսահման սերը կարող է դիմանալ բոլոր փորձություններին»: Իրենց իմաստի ընդհանրացված բնույթի շնորհիվ բերված նախադասությունները իմաստային դրսևորման մակարդակով կարող են ներկայացվել որպես բարդ ներակայող, Այսպես, «Միայն աշխատասեր մարդիկ կարող են հասնել հաջողության» նախադասությունը կարող է փոխակերպվել «Եթե մարդիկ աշխատասեր են, ապա նրանք կարող են հասնել հաջողության»: Սակայն համեմատենք կա-

<sup>1</sup> Տե՛ս А. Н. Горя. Импликация ирреальности в простом предложении (на материале английского языка).—Теоретические и прикладные исследования по романским и германским языкам. Романо-германская филология», Кишинев, 1985, էջ 110:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Լ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 269:

ուղղվածքային առումով համանման «Միայն ավագ որդիներս կարող են խոսել անգլերեն» նախադասությունը հետևյալ երկխոսության մեջ. «Ա.— «Ես չորս որդի ունեմ»: Բ.— «Նրանք խոսո՞ւմ են անգլերեն»: Ա.— «Միայն ավագ որդիներս կարող են խոսել անգլերեն»: Այն, ինչպես միանգամայն միանշանակորեն կարելի է բխեցնել համատեքստից (վերջինս տվյալ դեպքում անգամ հավելական է), չի ենթարկվում այդպիսի փոխակերպման: Ուշագրավ է, որ Ն. Խոմսկին<sup>3</sup> տալիս է նման նախադասությունների փոքր-ինչ այլ, ավելի ձևական մեկնաբանություն: Մասնավորապես, նրա մեկնությամբ «Իմաստուն մարդն ազնիվ է» նախադասությունը ընկալվում է որպես «Այն մարդը, որն իմաստուն է, ազնիվ է»: Նկատենք, սակայն, որ բարդ որոշչային նախադասություններն, իրենց հերթին, հեշտությամբ կարող են փոխակերպվել իմաստային առումով նույնարժեք բարդ պայմանական նախադասությունների. «Եթե մարդն իմաստուն է, ապա նա ազնիվ է»:

Որպես վերը շարադրվածի ապացույց կարող է ծառայել Չ. Պիրսի այն պնդումը, որ «նախադասությունը... սաղմնային մտահանգում է»<sup>4</sup>: Այլ է Ի. Կանտի տեսակետը. «Կան գիտնականներ, որոնք մտածում են, թե ենթադրական դրույթը հեշտությամբ կարելի է վերածել կատեգորիկի: Սակայն դա անհնարին է, քանի որ բնույթով նրանք միանգամայն տարբեր են: Կատեգորիկ դատողություններում վիճահարույց ոչինչ չկա, այլ ամեն ինչ հաստատական է: Ենթադրական դատողություններում, հակառակը, հաստատական է միայն եզրահանգումը: Այդ պատճառով էլ վերջիններս կարող են միմյանց միացնել նաև երկու սխալ դատողություն, քանզի այստեղ հարցը սոսկ միացման ճշտությունն է՝ եզրահանգման ձևը, ինչի վրա հիմնված է այդ դատողությունների տրամաբանական ճշմարտացիությունը: Էական տարբերություն կա հետևյալ երկու դրույթների միջև. բոլոր բարդ մարմինները բաժանելի են, և եթե բոլոր մարմինները բարդ են, ապա դրանք բաժանելի են: Առաջինում ես ուղղակիորեն հավաստում եմ փաստը, երկրորդում՝ փաստը սոսկ վիճահարույց ձևով արտահայտված պայմանով»<sup>5</sup>:

Տարանջատական և բացարձակ հանրույթներ արտահայտող պարզ նախադասություններ: Ներակայման ոչ բացահայտ արտահայտիչներից են նաև հանրույթների որոշ տեսակներ արտահայտող պարզ նախադասությունները: Դրանք են տարանջատական հանրույթները, այսինքն հետևյալ տիպի նախադասությունները. «Ամեն մի լեզվում կա կամ X հատկանիշը, կամ Y հատկանիշը», ինչպես նաև բացարձակ հանրույթները, այսինքն հետևյալ տիպի նախադասությունները. «X-ը և Y-ը միշտ ներկայացված են համատեղ»: Առաջինները կարող են փոխակերպվել լեզվական հանրույթների տարատեսակներից մեկի՝ փոխադարձ ներակայմանը, և ներկայացվել երկու բարդ պայմանական ասույթների համակցման տեսքով. «Ամեն մի լեզվում եթե առկա է X հատկանիշը, ապա բացակայում է Y հատկանիշը, և եթե առկա է Y հատկանիշը, ապա բացակայում է X հատկանիշը»: Հանրույթների երկրորդ տեսակը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով. «Եթե առկա է X-ը, ապա առկա է նաև Y-ը, և եթե առկա է Y-ը, ապա առկա է նաև X-ը»:

Վերջում ավելացնենք, որ վերը կատարված վերլուծությունը կարևոր է ներակայման հարաբերության և լեզվում դրա բազմապիսի արտահայտությունների ճշգրիտ ընկալման տեսանկյունից:

<sup>3</sup> S6՝ N. Chomsky. Language and Mind, Harcourt Brace Jovanovich, Inc., New York, 1972, էջ 25:

<sup>4</sup> Ч. С. Пирс. Из работы «Элементы логики». — «Семиотика», М., 1983, с. 172.

<sup>5</sup> И. Кант, Логика. — «Трактаты и письма», М., 1980, с. 409.

**Л. Г. БРУТЯН — Простые предложения как корреляты импликации.**— В статье рассматриваются те разновидности простых предложений, которые в имплицитном виде выражают отношение импликации. В рамках простых предложений, выражающих импликацию, дифференцируются и анализируются следующие их разновидности: 1) простые предложения, выражающие условную семантику с помощью некоторых импликаторов; 2) простые предложения, выражающие аксиоматические факты и универсальные истины; 3) простые предложения, выражающие дизъюнктивные и абсолютные универсалии. Показывается, что все они выражают импликативное отношение на глубинном уровне в результате соответствующих трансформаций.